# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷՔՍԻՏՈ ՍՊԸ-ն ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 27 | Էքսիտո | Էքսիտո | Էքսիտո | Պատրաստված էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները կլորացված: Ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվում է սեղմ ժամկետներում կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Ապահովվում է էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը կկատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Ապահովվում է էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը կլինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով: Եռահարկ մահճակալի չափսերն են՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | 1530 x 630 x 840 մմ ( Ե x L x Բ), այն պատրաստվում է 18 մմ լամինացված E0դասի ՓSU-ից: Հավաք վիճակում այն ունի ուղղանկյունաձև արկղի տեսք: Ներքևից առաջին հարկի երկարությունը՝ 1380մմ, լայնությունը՝ 570 մմ: Մեջտեղի /երկրորդ/ հարկի երկարությունը՝ 1450մմ, լայնությունը՝ 600 մմ: Վերևի /երրորդ/ հարկ երկարությունը՝ 1530մմ, լայնությունը՝ 630 մմ: Յուրաքանչյուր հարկի խորությունը՝ 15-200 մմ: Բացի հենքային սնարներից յուրաքանչյուր հարկն ունի իր առանձին սնարները, որոնց վրա ամրացված է սահամեխանիզմ և անվակներ՝ շարժունակության համար: Առաջին և երկրորդ հարկերն՝ շարժական: Ներքնակների տակ գցվում է ամբողջական 18մմ հաստությամբ լամինացված E0դասի ՓSU, որի վրա օդափոխության համար բացվում են 30 մմ տրամագծով առնվազն երեք անցք: Ներքնակը հենվում է կողերով, լայնությամբ անցնող 18մմ հաստությամբ 50 մմ լայնության լամինացված E0դասի ՓSU-ից պատրաստված հինգ ամրագոտիների և սնարներին ամրացված դետալների վրա: Ներքնակի նկարագիրը՝ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 858-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Մահճակալի ներքնակի չափսերն են՝ 1450 x 600 x 100 մմ ( L x Ե x Բ): Երեսի կտորը՝ 100% բամբակյա, լցոնված պարունակությունը՝ 100% բժշկական բամբակ: Չքրտնեցնող է, հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր հումքից: Գույնը և չափսերը նախապես կհամաձայնեցվի մանկապարտեզի տնօրինության հետ: Լամինացված E0դասի ՓSU-ի աշխատանքային հարթության բոլոր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | անկյունները կլորացված, եզրերը շրջափակված 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC/: Մահճակալի կոնստրուկցիոն բոլոր դետալները հավաքված են պտուտակներով, փայտե չիվիներով և էմուլսիայով: Բոլոր միացումներն իրականացվում են թաքնված և երաշխավորված ամրակցումներով: Գույները նախապես կհամաձայնեցվեն մանկապարտեզի տնօրինության հետ: Ոտքերին ամրացվում են պլաստիկե խցաններով՝ 8 մմ հաստությամբ: Նմուշները մինչ մատակարարում կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Երաշխիքային սպասարկում՝ 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա կկատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը կկատարվի հայերեն, ընթեռնելի տարբերակով: Մակնշումը կկատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում վերոգրյալ տեղեկատվությունը կամփոփվի ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ` տեխնիկական անձնագրում): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ЭКСИТО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 27 | | | | |